



ՔԱՂԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ ՆԻՍՏԵՐԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1973 թ. ՄԱՅԻՍԻ 16-Ի ՆԻՍՏԻՑ

Մայիսի 16-ին, չորեքշաբթի օր.
 Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական հիսուր, որին մասնակցում է նաև, որպես Գերագույն հոգեվոր խորհրդի անդամ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Անդրե առքեաց. Մանուկյանը, որը Հայոց Հայրապետի հրավերով ուստավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Ա. Բաց անելով ժողովը, Վեհափառ Հայրապետը ողջունում է տ. Սերովի արքեաց. Մանուկյանի ներկայությունը Մայր Աթոռուն և իր գոհունակությունը հայտնում, որ սրբազն հայրը, պատասխանելով իրեն ուղղված հրավերին, սիրով եկել է Մայր Աթոռ և պատեհությունն ունեցել, որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, ներկա լինելու սույն ժողովին:

Այսուհետև Նորին Սերությունը հրավիրում է տ. Սերովի արքեափակոպոսին, որպեսզի ընդհանուր գծերի մեջ ծանոթացնի ժողովին Արևմտյան Եվրոպայի թեմի վերջն շրջանի գործունեությանը:

Իր հաղորդման սկզբում տ. Սերովի արքազնը Արևմտյան Եվրոպայի թեմը բնութագրում է որպես Հայաստանյաց եկեղեցու հաստատուն և ավանդապահ թեմերից մեկը,

որն ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, հավատարիմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, շարունակում է գործել՝ հոգալով հավատացյալ հայ ժողովրդի հոգևոր կարիքները: Ապա սրբազն հայրը խոսում է մարտի 13—14 օրերին Ֆրանսիայի և Արևմտյան Եվրոպայի Հայաստանյաց եկեղեցիների Փարիզում գումարված խորհրդակցական ժողովի մասին, որին մասնակցել են 20 հոգևորական և 15 աշխարհական պատգամավորներ՝ նշելով, որ այդ համագումարը թեմի վերջին շրջանի գործունեության մեջ հանդիսացավ կարևոր մի հայտնագործություն, որին լայնորեն արձագանքեց արտասահմանի հայ մամուլը, և որի մասին արդեն մի ընդարձակ տեղեկատվություն է ուղարկել Մայր Աթոռ (Տես «Էջմիածն» ամսագիր, 1973 թ., № Դ, էջ 35):

Անդրադանալով վերջերս Արևմտյան Գերմանիա կատարած իր այցելության մասին, տ. Սերովի արքեափակոպոսը նշում է, որ այդ շրջանում հույնական հետզետևներ կազմակերպվում է տեղի հայության եկեղեցական-համայնքային կյանքը: Արդեն կազմվվել են եկեղեցական վարչություններ Քյոլն և Ֆրանկֆուրտ քաղաքներում, որը պարբերաբար Փարիզից ուղարկվում են վարդապետներ՝ հոգալու համար այդ շրջանում օրավոր բազմացող հայ հավատացյալների հոգևոր կարիքները:

Այնուհետև սրբազնը Վեհափառ Հայրապետի ուշադրությանն է հանձնում Լինի շրջանի հայության համար և հայրապետական պատվիրակի փոխանորդի դրություն հաստատելու անհրաժեշտությունը՝ եկեղեց այն հանգամանքից, որ այդ շրջանում նույնպես, ինչպես հարավային Ֆրանսիայում, ապրում է բավականին հիմ հայություն, կաև ոչ քիչ թվով հայկական եկեղեցիներ և հետևաբար ավելի լայն և կազմակերպված եկեղեցական գործունեություն ծավալելու մեջ հնարավորությունները։ Այդ կապակցությամբ տ. Սերովի արքեպիսկոպոս ժողովի Ակատապուն է հանձնում նաև թեմում աշխատող հոգևորականների կազմը համարելու պարագան Եջեղով, որ թեմը ներկայում մեծ կարիք ունի պատրաստված եկեղեցական ուժերի, հոգևոր հովիվների։

Ժողովը գոհունակությամբ է ընդունում տ. Սերովի արքեպիսկոպոսի հաղորդումը Արևմտյան Եկուղայի թեմի գործունեության վերաբերյալ։ Այդ առթիվ Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ է համարում, որ տ. Սերովի արքեպիսկոպոսը իր թեմի վարդապետներից մեջին հանձնարարի այցելություններ տալ նաև Համբորգ և Մյունիս քաղաքները ու այնուել և կազմել եկեղեցական վարչություններ։ Նորին Սրբությունը միաժամանակ ցանկություն է հայտնում, որ այդ երկու համայնքներում կատարված այցելության մասին պատրաստվի մի հանգամանալից գեկուցագիր, որը Եղվեն նորակազմ վարչությունների անդամների անունները, և գեկուցագիրն ուղարկվի Սայր Աթոռ՝ «Հշմածին» անսագրում հրատարակելու համար։

*

*

Բ. Գերագույն հոգևոր խորհրդի սույն հիսուսում հաղորդում է լավում այն մասին, որ 1973 թվականի մայիս 3 թվակիր հայրապետական կոնդակով Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ է Եշանակվել տ. Նարեկ վրդ. Շաքարյանը, որն արդեն մեկնել է Մոսկվա՝ ստանձնելու իր նոր պատուն։

Ռուսաստանի և Նոր Նախիջևանի նախկին առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը հրավիրվել է Սայր Աթոռ՝ այլ աշխատանքի անցնելու համար։

Գերագույն հոգևոր խորհրդը գոհունակությամբ է ընդունում սույն հաղորդումը։

*

*

Գ. Այնուհետև Գերագույն հոգևոր խորհրդը լսում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ տ. տ. Կոմիտաս արքեպ։ Տեր-

Ստեփանյանի և Հովհաննես Թոփովյանի՝ Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ մարտի 23-ից մինչև մայիսի 10-ը Ավատրալիայի հայոց թեմում կատարած հովհական այցելության և թեմի եկեղեցական-ազգային կյանքի մասին հաղորդումները։

Սայր Աթոռի պատվիրակները անձամբ հաղորդել են Հայոց Հայրապետի ողջույններն ու օրենությունները Ավատրալիայի տիրախնամ թեմի առաջնորդ սրբազնին, հոգևորականության, համայնքային վարչության անդամներին և հավատացյալ ողջ հայությանը։

Պատվիրակներն այցելել են Սիդնեյի և Սելրունի հայկական եկեղեցիները, դրաբարումները, ակումբները։

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը թե՛ Սիդնեյում և թե՛ Մելբուրնում պատարագել է և Բահրին կենաց քարոզությամբ մսիթարել հայ հավատացյալներին։

Գերագույն հոգևոր խորհրդը գոհունակությամբ արձանագրում է Սայր Աթոռի պատվիրակների հովիական այցելության առթիվ կատարած բարեհաճ աշխատանքները։

*

*

1973 թ. ՄԱՅԻՍԻ 23-Ի ՆԻՍՏԻՑ

Մայիսի 23-ին, չորեքշաբթի օր.

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, ժամը 19-ին, Վեհարանում դարձյալ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամական հիսուսը, որին մասնակցում է նաև տ. Սերովի արքեպ. Մանուկյանը։

Ա. Սույն հիսուսում լսում է Սայր Աթոռի Միջեւեկեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը, նաևս բաժնի վերջին երեք ամիսների աշխատանքների և ապա Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հրավերնամակի հիման վրա՝ 1975 թվականին Զակարտայում հրավիրվելիք համագումարում հայ եկեղեցու մասնակցության մասին։

Գերագույն հոգևոր խորհրդը սույն հաղորդումը արձանագրում է ի գիտություն։

*

*

Բ. Այնուհետև ժողովի հիսուսում լսում է տ. Արմեն ծ. վրդ. Բերբերյանի գեկուցումը՝ վերջերս Լոնդոնից ատացված մի շարք նախակների մասին, ու. Պետրոս եկեղեցու համայնքային կյանքի ծոցում ստեղծված կացության վերաբերյալ։



Մայր Աթոռի պատվիրակներ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Հովհաննես Թոփովյանը, Ավագանյանի Բայրո առաջնորդ տ. Գարեգին Խաչի Ավագանյանը Սիդնեյի կարդինալ Ֆրիմանի Բայրո

Գերագույն հոգևոր խորհուրդը, քննության առնելով այս կացությունը, կարծիքների փոխանակությունից հետո խնդրում է Վեհափառ Հայրապետին՝ տ. Պատկ արքեպ. Թումայանին հրավիրել Մայր Աթոռ՝ հանգամանորեն զբաղվելու համար այլ հարցով։

* * *

Գ. Գերագույն հոգևոր խորհուրդն իր մայն 23-ի նիստում լուսում է նաև Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանի՝ Նորին Վեհափառության ուղած դիմումը՝ առողջական վիճակի պատճառով և թոշակի անցնելու կապակցությամբ, առաջիկա հունիսի

1-ից իր պաշտոնից հրաժարվելու մասին։

Գերագույն հոգևոր խորհուրդը, ըստ արձանվույն գնահատելով Հայկ Առաքելյանի բազմամյա, անխոնչ աշխատանքը 1955 թվականի օգոստոսից սկսած, որոշում է կայսցնեմ խնդրել Վեհափառ Հայրապետին՝ ընդուացնելու եղած դիմումին։

Նորին Սրբությունը տալիս է իր համաձայնությունն ու օրինությունը Հայկ Առաքելյանին։

Գերագույն հոգևոր խորհրդի նոյն նիստում Մայր Աթոռի դիվանապետ է նշանակվում տ. Արսեն ծ. Վլդ. Բերբերյանը, որը սիստի շարունակի վարել նաև Միջնկեդեգական հարաբերությունների բաժինը։

